

# Արհագրույն գործը

---

## Չորսի նշանը



Սըր Արթուր Քոնան Դոյլ  
**Շերլոք Հոլմս**



*Հարգելի ընթերցող,*

*Այս տարբերակը նախատեսված է միայն նախադիտման համար և ներառում է միայն որոշ էջեր: Գրքի ամբողջական տարբերակը կարդալու համար կարող եք գնել այն գրահասանդիներից կամ պարզապես այցելելով գրքի էջում տեղադրված հղումով:*

# Արնագույն գործը

---

## Չորսի Գշանը



Սըր Արթուր Բոնան Դոյլ  
Շերլոք Հոլմս



ՀՏԴ 821.111-31Քոնան Դոյլ  
ԳՄԴ 84(4Անգլ)-44  
Ք 800

**Անգլերենից թարգմանեցին Քրիստինե Չիլինգարյանը և  
Էլիզա Սարգսյանը**

**Քոնան Դոյլ Արթուր Սըր**

Ք 800 Արնագոյն գործը: Չորսի նշանը: Վիպակ/ Սըր Արթուր  
Քոնան Դոյլ.- Եր.: «Կարապա» ՍՊԸ, 2018.- 328 էջ:

*«Արնագոյն գործը» ու «Չորսի նշանը» սպեղծագործությունները նշանավոր խոսքարկուի մասին պատմող առաջին երկու գործերն են՝ լոյս տեսած համապատասխանաբար 1887 և 1890 թթ.-ին:*

*«Արնագոյն գործը» վիպակում առաջին անգամ ծանոթանում ենք Շերլոք Հոլմսի մեթոդին, ինչպես նաև տեղի է ունենում նրա և իր հավա-  
յարիմ ընկերոջ ու կենսագրի՝ բժիշկ Ջոն Ուոթսոնի հանդիպումը: Վերջինիս անունից էլ ներկայացված է սպեղծագործությունների մեծամասնությունը: Սակայն Հոլմսի իրական հաջողության պատմությունը սկսվեց «Չորսի նշանը» վիպակի հրատարակումից հետո: Վիպակի սյուժեն մշտապես լարվածության մեջ է պահում ընթերցողին՝ իր անսպասելի շրջադարձերով ու խորհրդավոր դեպքերի շարքի հետաքրքիր հանգուցալուծմամբ:*

ՀՏԴ 821.111-31Քոնան Դոյլ  
ԳՄԴ 84(4Անգլ)-44

ISBN 978-9939-9195-3-9

© «Կարապ»  
© «Էդիթ պրինտ»

## Առաջարկ

Բարեբախտաբար, ռազմական բժիշկ Ջոն Ուոթսոնը չզոհվեց աֆղանական պատերազմի ընթացքում, այլ, բարեհաջող վերադառնալով Անգլիա, բնակարան վարձեց Լոնդոնի թերևս արդեն ամենահայտնի փողոցում՝ Բեյքեր սթրիթում: Հենց նրա հուշագրությունների միջոցով աշխարհը ծանոթացավ մեկուսի կյանք վարող ու բացառիկ մտավոր ունակությունների տեր խուզարկուի հետ:

Շերլոք Հոլմսը ֆենոմեն է գրական աշխարհում: Իր գոյության սկզբից ի վեր նա հատել է իրականության ու հորինվածքի սահմանը: Լոնդոնցի ընթերցողի համար ամեն ինչ շատ բնական էր. Հոլմսն իր ժամանակակիցն էր, ապրում էր նույն քաղաքում, քայլում նույն փողոցներով, կարդում նույն թերթերը, իսկ նրա ընկեր Ուոթսոնը երբեմն պատմվածքներ գրելով պատմում էր իրենց արկածների մասին: Լոնդոնի փողոցները ճիշտ և ճիշտ համապատասխանում էին Քոնան Դոյլի նկարագրությանը՝ մառախլապատ, խավար, աղոտ լուսավորված գազային լամպերի թույլ լույսով: Վիկտորիանական Լոնդոնը խորհրդավոր էր, անկանխատեսելի ու վտանգավոր: Այդ ժամանակաշրջանում հանցագործությունների քանակը քաղաքում աճում էր: Ահա թե ինչու Հոլմսի արկածները ձշմարտանման էին թվում, ու ընթերցողների մեծ մասը կարծում էր, թե նա իրականում գոյություն ունի: Համենայն դեպս, նրանք կցանկանային, որ Հոլմսը գոյություն ունենար. գեթ մեկը, ով կարող էր իրենց փրկել հերթական հանցագործության զոհը դառնալուց: Շատերը նամակներ էին ուղարկում Բեյքեր սթրիթ և հույսով սպասում պատասխանի:

Հոլմսն աստիճանաբար վերածվել է մշակութային ֆենոմենի, որը ներկա է արվեստի բոլոր ճյուղերում: Սկզբում լինելով պարզապես գրական կերպար՝ նա ստեղծել է մի «շերլոքյան իրականություն», որի «բնակիչները» սիրում են հետևել խուզարկուի մտքերի ընթացքին, երբեմն իրենց ուժերն են փորձում դեղուկցիայի ոլորտում, իսկ առավել վառ երևակայություն ունեցողներն ու առավել տաղանդավորները հորինում են Հոլմսի նոր

արկածներ, բեմադրում ներկայացումներ, նկարահանում ֆիլմեր, սերիալներ, վարում բլոգներ, հրատարակում թերթեր, հիմնում միություններ և այլն:

Ստեղծված լինելով 19-րդ դարի վերջի Անգլիայում՝ մենակյաց խուզարկուի կերպարը շարունակում է «ապրել» մինչև մեր օրերը: Լինելով տիպիկ բրիտանացի և հատկապես՝ վիկտորիանական ժամանակաշրջանի բրիտանացի, նա այնուամենայնիվ ադապտացվում է տարբեր երկրների ու տարբեր ժամանակաշրջանների միջավայրերին՝ միաժամանակ պահպանելով որոշ բնորոշ հատկանիշներ, առանց որոնց կերպարը կկորցնի իր յուրահատկությունը: Ինչպես ասել է Չվեդ գրող, «Շերլոք Հոլմսի կյանքը և մահը» գրքի հեղինակ Մաթիաս Բուստրոմը՝ «Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունեցել է իր սեփական Շերլոք Հոլմսը»:

Բազմաթիվ սոցիալ-մշակութային գործոններ են նպաստել, որպեսզի Շերլոք Հոլմսը դառնա այն, ինչ դարձավ: Նախ՝ այդ ժամանակաշրջանում աննախադեպ զարգացում էր ապրում հրատարակչության ոլորտը, հատկապես՝ պարբերական մամուլը: Զարգանում էին տեխնոլոգիաները, կատարելագործվում էին տպագրման մեթոդները, տպագրվող գրականության ու մամուլի քանակն աննախադեպ աճ էր արձանագրում: Հոլմսի արկածները, սկսած երրորդից, տպագրվում էին հայտնի «The Strand» թերթի էջերում: Միդնի Փաջեթի նկարագարողումների միջոցով կերպարը դարձավ առավել ամբողջական ու ճանաչելի: Այնուհետև ամերիկյան «The Bookman» թերթը նրան ներկայացրեց օվկիանոսի մյուս ափին: Ընթերցողներն անհամբերությամբ էին սպասում յուրաքանչյուր հաջորդ պատմվածքին: Այս ամենը համընկավ այսպես կոչված «երկաթուղային գրականության»<sup>1</sup> զարգացման շրջանի հետ: Բրիտանացիները շատ ժամանակ էին անցկացնում գնացքով աշխատանքի գնալիս ու տուն վերադառնալիս և այդ ժամանակը լցնում էին թերթեր ընթերցելով: Հասարակությունը իր ազատ ժամանակը հետաքրքիր անցկացնելու կարիք ուներ: Գրագիտության մակարդակը նույնպես աճում էր, և մարդկանց նյութ էր պետք ընթերցելու համար: Մի խոսքով՝

---

1 Railway literature

կարող ենք ասել, որ Շերլոք Հոլմսը հայտնվեց ձիշտ ժամանակին, ձիշտ տեղում:

Հոլմսն այնպես է ներխուժել իրական աշխարհ, որ նրա հետ կապված բառերն արդեն վաղուց առօրյա խոսակցական լեզվի մաս են կազմում: Օրինակ՝ գերմաներենում կա sherlockieren բառը, որը նշանակում է իրեն դրսևորել Շերլոք Հոլմսի նման: Օքսֆորդի բառարանը Sherlock բառը բացատրում է որպես մի մարդ, ով ուսումնասիրում է գաղտնիքներ<sup>1</sup>: Կա նաև Sherlockian բառը, որը երկու իմաստ ունի՝ որպես գոյական և որպես ածական: Առաջին դեպքում նշանակում է Շերլոք Հոլմսի արկածների մասին պատմությունների սիրահար, իսկ երկրորդ դեպքում՝ Շերլոք Հոլմսին բնորոշ, օրինակ՝ դիտարկելու շերլոքյան ունակություն: Իսպաներենում կա sherlockolmitos բառը, որը բնութագրում է Շերլոքի ոճով փոքրիկ մտահանգումները:

1895թ. եգիպտական ոստիկանությունն անգամ օգտագործել է Շերլոք Հոլմսի արկածների մասին պատմող գրքերը որպես կատարյալ խուզարկուի գործնական ձեռնարկ:

Հազվադեպ է պատահում, որ կերպարն իր ճանաչելիությանը ու փառքով առաջ անցնի հեղինակից. սա հենց այդ դեպքերից է: Հայտնի որսորդական գլխարկը, խոշորացույցը, երկար, սև վերարկուն, ջութակը, բրիտանական նուրբ հումորը և յուրօրինակ աշխարհայացքը արդեն վաղուց բոլորի մոտ ասոցացվում են հենց Հոլմսի հետ: Իրականում Արթուր Քոնան Դոյլը նույնիսկ փորձել է «սպանել» Հոլմսին, քանի որ վերջինս «խանգարում էր» գրադվել իր սիրելի ժանրով՝ պատմավեպերով: Քոնան Դոյլը ցանկանում էր դառնալ իր ժամանակաշրջանի սրբ Ուոլթեր Սքոթը<sup>2</sup>: Նրա համար Շերլոք Հոլմսն ընդամենը միջոց էր՝ մուտք գործելու գրական միջավայր: Նա բնավ մտադիր չէր Հոլմսին դարձնել իր գլխավոր ստեղծագործությունը, ավելին, նույնիսկ քննադատորեն էր վերաբերվում նրան՝ չհամարելով, որ այն մեծ գրական արժեք ունի: Մի առիթով Քոնան Դոյլն ասել է. «Եթե ես չսպանեմ նրան, ապա նա ինձ կսպանի»: Ի վերջո նա հենց այդ-

1 a person who investigates mysteries or shows great perceptiveness («It doesn't take a Sherlock to figure out that she's lying to me»).

2 Շոտլանդացի աշխարհահռչակ գրող, պատմավեպի ժանրի հիմնադիրը

պես էլ վարվեց՝ խուզարկուին «նետելով» Ռեյխենբախ ջրվեժից: Այդպիսով նա հույս ուներ հանգիստ գրադվել իր սիրելի գրական ուղղությամբ՝ պատմավեպերով: Սակայն արդեն վաղուց ոչ թե Քոնան Դոյլն էր կառավարում Հոլմսի կյանքը, այլ հակառակը. մոտ տասը տարվա ընդմիջումից հետո ընթերցողների ու հրատարակիչների ճնշման տակ նա «վերակենդանացրեց» խուզարկուին: Առաջին ստեղծագործությունը, որ հրատարակվեց Հոլմսի կարծեցյալ մահից հետո, «Բասքերվիլների շունն» էր՝ ամենամեծ աղմուկ հանած ու թերևս ամենահայտնի վիպակը: Չնայած այն հետահայաց արկած էր, բայց հույս արթնացրեց, որ արկածները կշարունակվեն: Այդպես էլ եղավ:

Քոնան Դոյլից առաջ միակ գրողը, ով որպես իր գրքի գլխավոր կերպար է ընտրել խուզարկուին, եղել է Էդգար Ալլան Պոն: 1841թ. նա գրել է «Սպանությունները Մորգ փողոցում» պատմվածքը, որտեղ խուզարկուն Օգյուստ Դյուպենն է: Այս գիրքը համարվում է դետեկտիվ ժանրի առաջին ստեղծագործությունը, սակայն Դյուպենին վիճակված չէր այնպիսի հեղաշրջող դեր խաղալ դետեկտիվ ժանրում, ինչպես Բեյքեր սթրիթի խորհրդավոր բնակչին: 1887թ. հայտնվեց Շերլոք Հոլմսը՝ «Արնագույն գործը» վիպակի շրջանակներում, որն առանձնապես մեծ աղմուկ չառաջացրեց գրական շրջանակներում: Այն մերժվել է բազմաթիվ խմբագիրների կողմից ու ի վերջո տպագրվել «Ward Lock & Co.» հրատարակչության կողմից: Հեղինակը ստացել է ընդամենը 25 ֆունտ ստեռլինգ և հենց սկզբից որևէ հեղինակային իրավունք չի ունեցել այս պատմվածքի համար: Չնայած Հոլմսի ոչ այնքան հաջողակ նորամուտին՝ ամերիկյան «Lippincott's Monthly Magazine»-ի խմբագիրը, նկատելով նրա ներուժը, Քոնան Դոյլին հրավիրում է ճաշի, որին ներկա էր նաև Օսքար Ուայլդը: Նա երկու գրողներին մեկական տեքստ է պատվիրում իր ամսագրի համար: Արդյունքում ստեղծվում են «Չորսի նշանն» ու «Դորիան Գրեյի դիմանկարը»: Հենց այդ պահից էլ սկսվում է Հոլմսի հաղթարշավը:

Քոնան Դոյլի գրած 56 պատմվածքներն ու 4 վիպակները կազմում են այսպես կոչված՝ «The Canon»-ը, սակայն Հոլմսի արկածները չեն սահմանափակվում դրանցով: Շատ շատերն են



ստեղծագործել ու շարունակել Քոնան Դոյլի գործը: Ներկայումս «Շերլոքյան գրականության» ծավալն այնպիսի ահռելի չափերի է հասել, որ պարզապես անհնար է բոլորը կարդալ: Դրանց թիվը հասնում է մոտ 20000-ի և ներառում է Քոնան Դոյլի ստեղծագործությունների նոր տարբերակներ, ամբողջովին նոր արկածներ, հետազոտական աշխատություններ, ինչպես նաև «չպատմված պատմությունները»<sup>1</sup>, որոնց մասին Քոնան Դոյլն ակնարկում է իր պատմվածքներում՝ առանց մանրամասնելու: «Շերլոքյան գրականություն» են ստեղծել այնպիսի հայտնի գրողներ, ինչպիսիք են Մարկ Տվենը, Սթիվեն Բինգը և Նիլ Գեյմանը:

Աշխարհում գոյություն ունեն ավելի քան 500 «հոլմսյան միություններ»: Ամենահայտնիներն են Լոնդոնի «Շերլոք Հոլմսի միությունը» և Նյու Յորքի «Բեյքեր սթրիթի անկանոն ջոկատը», որին անդամակցել են նաև ԱՄՆ-ի նախագահներ Հարի Թրումանը և Ֆրանկլին Ռուզվելտը: Երկու միություններն էլ ստեղծվել են 1934թ., և երկուսի հիմքում էլ ընկած է այն հիմնադրույթը, որ Հոլմսն ու Ուոթսոնն իսկապես գոյություն են ունեցել, իսկ Քոնան Դոյլը եղել է Ուոթսոնի գրական գործակալը:

Շերլոք Հոլմսի նախատիպը Էդինբուրգի համալսարանում Քոնան Դոյլի դասախոս դոկտոր Ջոզեֆ Բելլն է եղել: Նա նկատելու ու հետևություններ անելու յուրահատուկ տաղանդ ուներ և հաճախ էր զարմացնում ուսանողներին: Դոկտոր Բելլը շատ հետաքրքրված էր Քոնան Դոյլի ստեղծագործություններով և նույնիսկ գրել է նրա գրքերից մեկի առաջաբանը: Ամերիկյան «The Bookman» ամսագրում տպագրված «Շերլոք Հոլմսի մասին» հոդվածում նա ասում է, որ այդ ժամանակաշրջանի խուզարկուական վեպերը բավականին ձանձրալի էին և ոչ ստեղծարար կրեատիվ: Սցենարները հիմնականում նման էին իրար, խուզարկուն բացահայտում էր գործը առանց որևէ մեթոդի, առանց որևէ բացատրության: Պատմությունները կենտրոնանում էին արդյունքի, այլ ոչ թե մտահանգման ընթացքի վրա: Բացի դրանից՝ պատմությունը կենտրոնացած չէր խուզարկուի վրա:

2012թ. Շերլոք Հոլմսը գրանցվել է Գինեսի ռեկորդների

---

1 Untold stories

գրքում որպես գրականության մեջ մարդկային այն կերպարը, որն ամենից շատ է ներկա կինեմատոգրաֆիայում և հեռուստատեսությունում: Եթե հաշվի առնենք նաև ոչ մարդկային կերպարները, ապա առաջին տեղում Դրակուլան է:

Հոլմսի տուն-թանգարանը, որը բացվել է 1990թ. մարտի 27-ին, Լոնդոնի ամենահայտնի վայրերից է: Բացառիկ է նրանով, որ տուն-թանգարանի «տերը» մի մարդ է, ով երբեք գոյություն չի ունեցել: Բեյքեր սթրիթ 221 Բ հասցեն նույնպես գոյություն չի ունեցել. այն հատուկ ստեղծվել է, որպեսզի կարողանան հիմնել թանգարանը:

2010թ. մեկնարկած BBC-ի «Sherlock» սերիալը երկրորդ շունչ հաղորդեց խուզարկուի կերպարին՝ լայնորեն կիրառելով նորագույն տեխնոլոգիաները, նորովի ապրեցնելով Շերլոքի լեգենդն ու հետաքրքրության նոր ալիք առաջացնելով: Սերիալի հեղինակները փորձում են ստանալ նույն էֆեկտը, ինչ ժամանակին Քոնան Դոյլն էր ստացել. ստեղծել տպավորություն, որ այդ ամենն իսկապես կատարվում է մեր կողքին: Նրանք ստեղծել են Ուոթսոնի բլոգը, Հոլմսի կայքը և այլ առցանց պլատֆորմներ, որտեղ կարելի է տեսնել, թե ինչպես են հայտնի խուզարկուն, նրա ընկեր Ջոնը, տանտիրուհի միսիս Հադսոնը և գրքի ու սերիալի այլ կերպարներ ակտիվորեն հրապարակումներ կատարում ու զվարճալի մեկնաբանություններ գրում:

Ի թիվս այլ ռեկորդների՝ Շերլոք Հոլմսի արկածների մասին պատմող Քոնան Դոյլի հավաքածուն համարվում է աշխարհի ամենաշատ լեզուներով թարգմանված գրքերից մեկը: Սիրով ձեզ ենք ներկայացնում հավաքածուի առաջին ամբողջական հայերեն թարգմանությունը: Հաճելի ընթերցանություն:

*Էլիզա Սարգսյան*

# ԱՐՆԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԸ

Սըր Արթուր Քոնան Դոյլ

Շերլոք Հոլմս



## ՄԱՍ 1.

# ԲԱՆԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՈՐԱԽՄԲԻ ՆԱԽԿԻՆ ՍՊԱ, ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈԿՏՈՐ ԶՈՆ Հ. ՈՒՈԹՍՈՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

## Գլուխ 1. Պարոն Շերլոք Հոլմսը

1878 թվականին ավարտեցի Լոնդոնի համալսարանը՝ ստանալով բժշկական գիտությունների դոկտորի կոչում, և անմիջապես մեկնեցի Նեթլի՝ զինվորական վիրաբույժների հատուկ կուրս անցնելու նպատակով: Այստեղ ուսումնա ավարտելուց հետո ինձ համապատասխանաբար նշանակեցին որպես վիրաբույժի օգնական Նորթամբրլենդի հինգերորդ հրաձգային գումարտակում: Վերջինս այդ ժամանակ տեղակայված էր Հնդկաստանում, և նախքան կհասցնեի միանալ, բռնկվեց Աֆղանական երկրորդ պատերազմը: Բոմբեյում ավի իջնելուն պես իմացա, որ իմ գունդն արդեն առաջ է անցել լեռնացքով և հասել թշամական երկրի խորքերը: Այնուամենայնիվ, բազմաթիվ այլ սպաների հետ, ովքեր նույն իրավիճակում էին հայտնվել, ինչ ես, գնացինք մեր գնդի հետքերով և բարեհաջող կերպով հասանք Քանդահար, որտեղ միացա գնդիս և անմիջապես անցա նոր պարտականություններիս:

Պատերազմը շատերին պարզևներ ու կոչումներ տվեց, իսկ ինձ ոչինչ՝ անհաջողություններից ու դժբախտություններից բացի: Ինձ իմ ջոկատից Բերքշիրյան գունդ տեղափոխեցին, որի հետ մասնակցեցի Մայվանդի մոտ տեղի ունեցած

ճակատագրական մարտերին<sup>1</sup>: Այդտեղ ջիզելյի<sup>2</sup> փամփուշտը խրվեց ուսիս մեջ, ջարդուփշուր արեց ոսկորս՝ քերծելով ենթանրակային զարկերակը: Ես կընկնեի արյունարբու դազիների<sup>3</sup> ձեռքը, եթե չլինեի իմ հանձնակատար Մարեյիցուցաբերած նվիրվածությունն ու քաջությունը, ով պառկեցրեց ինձ բեռնակիր ձիու թամբի վրա և բարեհաջող կերպով ապահով հասցրեց անգլիական զորախմբերի տարածք:

Ցավերից հյուծված և երկարատև գրկանքներից թուլացած՝ վիրավոր տառապյալների մի մեծ խմբի հետ ինձ տեղափոխեցին Փեշավարի գլխավոր հիվանդանոց: Այստեղ աստիճանաբար ապաքինվում էի և արդեն այնքան էի վերականգնել ուժերս, որ կարողանում էի քայլել հիվանդասենյակով և նույնիսկ դուրս գալ ծածկապատշգամբ՝ արևից մի փոքր ջերմանալու, երբ հանկարծ մեր հնդկական տիրույթների անեծքը՝ որովայնային տիֆը, տապալեց ինձ: Ամիսներ շարունակ գրեթե հույս չէին տալիս, որ կապրեմ, և երբ վերջապես ուշքի եկա ու ոտքի կանգնեցի, այնքան թույլ և հյուծված էի, որ բժշկական խորհուրդը որոշեց, առանց որևէ օր կորցնելու, անհապաղ հետ ուղարկել ինձ Անգլիա: Այսպիսով, «Օրոնտես» ռազմական նավով մեկնեցի Անգլիա և մեկ ամիս անց ժամանեցի Փորթսմութի նավահանգիստ՝ անվերադարձ քայքայված առողջությամբ, բայց փոխարենը կառավարությունը հայրական հոգատարությամբ իննամսյա արձակուրդի թույլտվություն էր տվել այն վերականգնելու համար:

Անգլիայում ազգականներ կամ բարեկամներ չունեի և հետևաբար ազատ էի, ինչպես քամին, կամ ազատ այնքանով, որքանով օրական տասնմեկ շիլլինգ և վեց պենս եկամուտը կարող էր թույլ տալ: Այսպիսի հանգամանքներում բնականաբար ձգտում էի Լոնդոն՝ այդ մեծ ու կեղտոտ ճահիճը, որն

1 Մայվանդի ճակատամարտը Երկրորդ անգլա-աֆղանական պատերազմի (1878-1880թթ. ) կարևորագույն մարտերից մեկն էր, որը տեղի է ունեցել 1880թ. հուլիսի 27-ին և ավարտվել անգլիական զորքերի պարտությամբ:

2 Աֆղանական երկար փողով հրացան:

3 Ֆանատիկ մուսուլման զինվոր:

անդիմադրելիորեն դեպի իրեն է քաշում կայսրության բոլոր ծուլերին ու անբաններին: Լոնդոնում որոշ ժամանակ ապրեցի Սթրենդի վրա գտնվող մի մասնավոր հյուրանոցում՝ գոյությունս անիմաստ ու անհարմարավետ քարշ տալով և ունեցածս գումարի համեմատ ծախսելով զգալիորեն ավելի շատ, քան պետք էր: Արդյունքում իմ ֆինանսական վիճակն այնքան տագնապալի դարձավ, որ շուտով հասկացա՝ կան պետք է լքեմ մայրաքաղաքը և բնակություն հաստատեմ որևէ գյուղում, կան ամբողջովին փոխեմ ապրելակերպս: Ընտրելով վերջին տարբերակը՝ սկսեցի նրանից, որ որոշեցի լքել հյուրանոցը և բնակություն հաստատել ավելի համեստ ու էժան բնակարանում:

Ընց այդ օրը, երբ եկա այս եզրակացությանը, Քրիթերինոն բարում էի, երբ ինչ-որ մեկը խփեց ուսիս: Շրջվելով ճանաչեցի երիտասարդ Սթենֆորդին, ով իմ ասիստենտն էր Բարթսի՝ հիվանդանոցում: Միայնակ մարդու համար, անշուշտ, շատ հաճելի է մեծ ու անհյուրընկալ Լոնդոնում ծանոթ մարդու տեսնելը: Նախկինում Սթենֆորդն ու ես առանձնակի մտերիմ չէինք, բայց այժմ խանդավառությամբ ողջունեցի նրան, նա էլ իր հերթին կարծես ուրախ էր ինձ տեսնելու համար: Չափազանց ոգևորվածությունից նրան Հոլբորնում լանջի հրավիրեցի, և քերով<sup>2</sup> միասին ուղևորվեցինք այնտեղ:

- Այդ ինչ եք արել Ձեզ հետ, Ուոթսոն,- անթաքույց հետաքրքրությամբ հարցրեց նա, մինչ մեր քերը դղրդյունով անցնում էր Լոնդոնի մարդաշատ փողոցներով:- Դուք լուցկու չոփի նման նիհարել և ընկույզի նման թխացել եք:

Ես համառոտ պատմեցի իմ արկածների մասին և հազիվ էի հասցրել ավարտել պատմությունս, երբ հասանք մեր վերջնակետին:

-Խեղճ մարդ,- կարեկցանքով ասաց նա դժբախտություններիս մասին լսելուց հետո:- Իսկ ի՞նչ եք անում հիմա:

1 Լոնդոնի «Սուրբ Բարդուղիմեոսի» հիվանդանոց:

2 Երկանիվ կառք (հետևում կառապանի համար նստատեղով):

-Բնակարան եմ փնտրում,- պատասխանեցի ես:- Տեսնենք հնարավոր է ողջամիտ գնով հարմարավետ սենյակ գտնել:

- Տարօրինակ է,- նկատեց իմ ուղեկիցը,- Դուք այսօր երկրորդ մարդն եք, ումից լսում եմ այդ արտահայտությունը:

-Եվ ո՞վ էր առաջինը,- հարցրի ես:

-Ծանոթներիցս մեկը, ով աշխատում է մեր հիվանդանոցի քիմիական լաբորատորիայում: Այս առավոտ նա ողբում էր, որ չի կարողանում գտնել մեկին, ում հետ կկիսի իր գտած շատ լավ բնակարանի վարձը, քանի որ վերջինս չափազանց թանկ էր իր դրամապանակի համար:

-Աստված վկա,- բացականչեցի ես,- եթե նա իսկապես ցանկանում է ինչ-որ մեկի հետ կիսել բնակարանը և ծախսերը, ապա ես հենց այն մարդն եմ, ում փնտրում է: Ինձ համար էլ ավելի նախընտրելի է ապրել ինչ-որ մեկի ընկերակցությամբ, քան միայնակ:

Երիտասարդ Սթենֆորդն իր գինու բաժակի վրայով բավականին տարօրինակ կերպով ինձ նայեց:

-Դուք դեռ չեք ձանաչում Շերլոք Հոլմսին,- ասաց նա,- և հավանաբար չեք ցանկանա երկար ժամանակով ընկերակցել նրան:

-Ինչո՞ւ, ինչ-որ վատ բան գիտեք նրա մասին:

-Օ՛, ո՞չ, ես դա ի նկատի չունեի: Նա մի փոքր տարօրինակ գաղափարներ ունի. գիտության մի շարք ձյուղերում էնտուզիաստ է: Որքանով որ գիտեմ, բավականին պարկեշտ մարդ է:

-Ենթադրաբար ուսանող է, ցանկանում է բժիշկ դառնալ:

-Ո՛չ, գաղափար չունեմ, թե ինչ է մտադիր անել: Իմ կարծիքով՝ շատ լավ տեղեկացված է անատոմիայից և առաջնակարգ քիմիկոս է, բայց որքան գիտեմ, երբեք համակարգված բժշկական դասընթացներ չի անցել: Գիտությամբ զբաղվում է շատ անկանոն ու արտառոց կերպով, բայց մեծ քանակությամբ լրացուցիչ գիտելիքներ է կուտակել, որ կզարմացնեին պրոֆեսորներին:

-Երբևէ չե՞ք հարցրել, թե որն է նրա նպատակը:



# ՉՈՐՄԻ ՆՇԱՆԸ

Սըր Արթուր Բոնան Դոյլ

Շերլոք Հոլմս



## Գեղուկցիայի արվեստը

Շերլոք Հոլմսը վերցրեց իր սրվակը բուխարու անկյունից և ենթամաշկային ներարկիչը՝ նրբագեղ մարոկկոյական տուփից: Նա իր երկար, սպիտակ, նյարդային մատներով ուղղեց նուրբ ասեղը և վերնաշապիկի ձախ թևքը հետ ծալեց: Մի պահ նրա հայացքը մտախոհ կանգ առավ մկանուտ թևին ու դաստակին, որոնք ամբողջովին ծածկված էին անհամար ներարկումների արդյունքում առաջացած կետերով ու սպիերով: Վերջապես ներարկիչի ասեղը կտրուկ ներս խրեց, ցած հրեց մխոցը և, բավականությամբ երկար շունչ քաշելով, մխրձվեց թավշյա բազկաթոռի մեջ:

Ամիսներ շարունակ ես ականատես էի լինում այս գործողությանը օրական երեք անգամ: Չնայած արդեն սովոր էի, սակայն միտքս չէր կարողանում հաշտվել դրա հետ: Ընդհակառակը, օր օրի ավելի էի զայրանում այդ տեսարանից, ու գիտակցությունս ամեն գիշեր տակնուվրա էր լինում այն մտքից, որ համարձակությունս չի բավարարում ընդդիմանալու: Նորից ու նորից երդվում էի, որ պետք է ինձ հոգեբանորեն պատրաստեմ այս թեմայով նրա հետ խոսելու, սակայն ընկերոջս սառը, անտարբեր կերպարանքը նրան դարձնում էր վերջին մարդը, ում հետ շփվելիս որևէ մեկն ազատության նմանվող ինչ-որ բան իրեն թույլ կտար: Հոլմսի հիանալի ընդունակությունները, իրավիճակին իշխող շարժումն ու բազմաթիվ բացառիկ հատկանիշներին սեփական փորձով ծանոթ լինելն ինձ անվստահ էին դարձնում և հետ պահում նրա հետ առերեսվելուց:

Սակայն այդ օրը՝ կեսօրից հետո, չգիտեմ՝ լանչի ընթացքում խմածս Բոն տեսակի գինու՞ց էր, թե՛ լրացուցիչ սրտնեղությունից, որ առաջացավ նրա պահվածքի մասին չափազանց շատ խորհելուց, հանկարծ զգացի, որ այլևս չեմ կարող դիմանալ:

–Այսօր ո՞րն է,– հարցրի ես,– մորֆին, թե՛ կոկաին:

Նա աչքերը ծուլորեն բարձրացրեց հնամաշ գրքից:

–Կոկաին է,– ասաց:– Յոթ տոկոսանոց լուծույթով: Կցանկանա՞ք փորձել:

–Իհարկե ո՛չ,– պատասխանեցի կոպտորեն:–Իմ օրգանիզմը դեռևս չի ապաքինվել աֆղանական արշավանքից: Ձեմ կարող ինձ թույլ տալ որևէ լրացուցիչ ճնշում գործադրել նրա վրա:

Նա ժպտաց իմ գայրույթից:

–Հավանաբար Դուք ճիշտ եք, Ուոթսոն,– ասաց նա:– Ենթադրում եմ, որ դրա ֆիզիկական ազդեցությունը բացասական է: Այնուամենայնիվ, մտքի համար այն համարում եմ չափազանց խթանող և պայծառացնող, որի կողքին երկրորդական ազդեցությունը չնչին նշանակություն ունի:

–Բայց մտածե՛ք,– ասացի ես լրջորեն,– հաշվի՛ առեք, թե ինչ գին եք վճարում: Ձեր ուղեղը, միգուցե, ինչպես ասում եք, պթափվի ու արթնանա, բայց դա պաթոլոգիական ու հիվանդագին գործընթաց է, որի պատճառով հյուսվածքներն արագությամբ ձևափոխվում են: Այս ամենը կարող է ի վերջո հանգեցնել մշտական տկարամտության: Դուք ինքներդ էլ լավ գիտեք, թե դա ինչ սարսափելի ազդեցություն է թողնում: Անշուշտ, չարժի դրան գնալ: Ինչո՞ւ չնչին անցողիկ հաճույքի համար ռիսկի տակ դնեք այն հրաշալի ունակությունները, որոնցով օժտված եք: Հիշե՛ք, որ ես խոսում եմ ոչ միայն ինչպես ընկերն ընկերոջ հետ, այլև ինչպես բժիշկը մեկի հետ, ում առողջության համար նա որոշ չափով պատասխանատու է:

Կարծես թե չվիրավորվեց: Ընդհակառակը՝ մատների ծայրերն իրար միացրեց ու արմունկները հենեց բազկաթոռի թիկնակներին այնպես, ասես ուրախությամբ պատրաստ է զրուցել:

-Իմ միտքը,- ասաց նա,- ապստամբում է լճացման դեմ: Ինձ խնդիրներ տվեք, աշխատանք տվեք, տվեք ամենախրթին գաղտնագիրը կամ ամենախճճված գործը, և ես ինձ կզգամ ինչպես ձուկը ջրում: Այդ դեպքում կարող եմ դիմանալ առանց արհեստական խթանիչների: Բայց ես ատում եմ մարդկային գոյության բթացնող առօրեականությունը: Ձգտում եմ մտավոր վերելքի: Ահա թե ինչու եմ ընտրել իմ սեփական առանձնահատուկ մասնագիտությունը կամ, ավելի ճիշտ, ստեղծել այն, քանի որ միակն եմ աշխարհում:

-Միակ ոչ պաշտոնական խուզարկո՞ւն,- ասացի ես՝ հոնքերս բարձրացնելով:

-Միակ ոչ պաշտոնական խորհրդատու-խուզարկուն,- պատասխանեց նա:- Ես վերջին և բարձրագույն ատյանն եմ՝ վճռաբեկ դատարանը հանցագործության բացահայտման գործում: Երբ Գրեգսոնը, Լեսթերեյդը կամ Էթլիի Ջոնսը փորձում են իրենց գլխից վեր թռչել ու ձախողվում են, որը, ի դեպ, նրանց սովորական վիճակն է, գործը հանձնվում է ինձ: Որպես փորձագետ՝ ուսումնասիրում եմ տվյալները և հայտնում եմ մասնագետի կարծիք: Այդպիսի դեպքերում փառք չեմ պահանջում: Անունս ոչ մի թերթում չի նշվում: Հենց ինքը՝ աշխատանքը, իմ յուրահատուկ ունակությունների համար ասպարեզ գտնելու հաճույքն է իմ բարձրագույն պարգևը: Բայց Դուք ինքներդ էլ որոշ փորձ եք ունեցել իմ աշխատանքի մեթոդներն ուսումնասիրելու Ջեֆերսոն Հոուփի գործում:

-Այո՛, իսկապես,- սրտանց ասացի ես:- Երբեք ավելի ցնցող դեպքի ականատես չեմ եղել: Նույնիսկ այն ներկայացրի մի փոքր բրոշյուրի մեջ՝ փոքր-ինչ ֆանտաստիկ վերնագրով՝ «Արնագույն գործը»:

Նա տխրությամբ գլուխը թափահարեց.

-Ես աչքի անցկացրի դա,- ասաց նա:- Անկեղծ ասած, չեմ կարող շնորհավորել Ձեզ այդ առթիվ: Հանցագործության բացահայտումը ճշգրիտ գիտություն է, համենայն դեպս, պետք է լինի այդպիսին: Հարկավոր է դրան վերաբերվել ճշգրիտ գի-

տությանը հարիր սառը և ոչ զգացմունքային ձևով: Դուք փորձել եք այն համեմել ռոմանտիզմով, որը նույնն է, թե էվկլիդեսի հինգերորդ թեորեմին կցեք մի սիրային պատմություն:

-Բայց այնտեղ ռոմանտիզմ կար,- առարկեցի ես:- Չէի կարող կեղծել փաստերը:

-Որոշ փաստեր հարկավոր է անտեսել, կամ, առնվազն, դրանք մեկնաբանելիս ճիշտ համամասնությունը պահպանել: Միակ կետը այդ գործում, որ արժանի էր նշվելու, հետաքրքիր վերլուծական մտահանգումն էր՝ հետևանքից դեպի պատճառ: Հենց դրա միջոցով ես հաջողությամբ բացահայտեցի այն:

Ես սրտնեղեցի, որ Հոլմսը քննադատում է հատուկ իրեն հաճույք պատճառելու համար արված աշխատանքը: Խոստովանում եմ՝ նաև նյարդայնացա նրա եսասիրությունից. ասես պահանջում էր, որ իմ բրոշյուրի յուրաքանչյուր տողը նվիրված լինի իր առանձնահատուկ մեթոդներին: Այն տարիների ընթացքում, երբ նրա հետ ապրում էի Բեյքեր սթրիթում, մեկ անգամ չէ, որ նկատել եմ ընկերոջս հանգիստ ու դիդակտիկ շարժումների տակ թաքնված փառասիրությունը: Սակայն ոչ մի դիտողություն չարեցի, այլ նստեցի՝ շոյելով վիրավոր ոտքս: Դրանից որոշ ժամանակ առաջ այդ ոտքիս մեջ ջիզալի<sup>1</sup> գնդակ էի ստացել, և չնայած այն ինձ չէր խանգարում քայլել, բայց հոգնեցուցիչ կերպով ցավում էր եղանակի յուրաքանչյուր փոփոխությունից:

-Իմ գործունեությունը վերջերս ընդլայնվեց մինչև մայրցամաք,- ասաց Հոլմսը քիչ անց՝ լցնելով իր հին, հավամրգիի արմատից պատրաստված ծխամորձը:- Անցած շաբաթ ինձնից խորհուրդ հարցրեց Ֆրանսուա լը Վիլարը, ով, ինչպես հավանաբար գիտեք, վերջերս ֆրանսիական խուզարկուական ծառայությունում առաջատարն է դարձել: Նա հիանալիորեն օժտված է կելտական արագ կռահողակա-

---

1 Հրազենի տեսակ՝ անցյալում տարածված Բրիտանական Հնդկաստանում, Կենտրոնական Ասիայում և Միջին Արևելքում: Լայտրեն կիրառվել է 19-րդ դարի վերջին տեղի ունեցած անգլա-աֆղանական պատերազմի ընթացքում:

նությանը, բայց թերանում է ճշգրիտ գիտելիքի իմացության համակողմանիության մեջ, որը շատ էական է իր արվեստն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար: Դեպքը կապված էր կտակի հետ և որոշ հետաքրքիր կողմեր ուներ: Ես կարողացա նրան ուղղորդել դեպի երկու նմանատիպ դեպքեր՝ մեկը Ռիգայում՝ 1857թ. մյուսը՝ Սենթ Լուիսում՝ 1871թ.: Դա նրան հուշեց ճիշտ լուծումը: Ահա իմ օգնության համար երախտագիտություն հայտնող նամակը, որն այս առավոտ ստացա:– Խոսելու ընթացքում նա իմ կողմ նետեց արտերկրյա նամակի թղթի մի դյուրաբեկ թերթ: Ես հայացք գցեցի դրա վրա: Անմիջապես աչքի զարնեց հիացմունքի խոսքերի հեղեղ, որի մեջ պատահաբար նկատեցի *magnifiques<sup>1</sup>*, *coup-de-maitre<sup>2</sup>* և *tour de force<sup>3</sup>* բառերը, որոնք վկայում էին ֆրանսիացու ջերմ հիացմունքի մասին:

–Նա խոսում է ինչպես աշակերտն իր վարպետի հետ,– ասացի ես:

–Օ՛, նա չափից դուրս բարձր է գնահատում իմ օգնությունը,– իմիջիայլոց ասաց Շերլոք Հոլմսը:– Ինքն էլ զգալի տաղանդներով է օժտված: Տիրապետում է կատարյալ խուզարկուկին անհրաժեշտ երեք հատկանիշներից երկուսին՝ նկատելու ու դեղուկցիայի կարողություններին: Նրան միայն գիտելիքն է պակասում, իսկ դա ժամանակի հետ կգա: Հիմա ֆրանսերեն է թարգմանում իմ փոքրիկ աշխատությունները:

–Ձեր աշխատությունները:

–Օ՛, Դուք չգիտե՞իք,– բացականչեց նա ծիծաղելով:– Այո՛, մեղք գործել եմ՝ մի քանի մենագրությունների տեսքով: Դրանք տեխնիկական թեմաներով են: Ահա, օրինակ, դրանցից մեկը՝ «Տարբեր ծխախոտերի մոխրի միջև տարբերությունների մասին»: Այստեղ ես թվարկում եմ սիգարների, սիգարետների ու ծխամորձի ծխախոտի 140 տեսակներ՝ գունավոր

---

1 Հրաշալի:

2 Վարպետորեն արված հնարք:

3 Ստեղծագործականություն:

այդ ծանր փորձությանը: Բայց Դուք հոգնած տեսք ունեք:

-Այո՛, հակազդումն արդեն սկսվում է: Մեկ շաբաթ քամած կիտրոնի նման կլինեն:

-Տարօրինակ է,- ասացի,- այն, ինչ ուրիշ մարդու դեպքում կանվանեի ծուլություն, Ձեզ մոտ հաջորդում է էներգիայի ու կայտառության փայլուն բռնկումներին:

-Այո՛,- պատասխանեց նա,- իմ մեջ միաձուլված են հիա-նալի պորտաբույծի ու ճարպիկ, արագաշարժ մարդու հատկանիշները: Հաճախ եմ մտածում Գյոթեի այս հին տողերի մասին.

Schade, daß die Natur nur  
einen Mensch aus Dir schuf,  
Denn zum würdigen Mann war  
und zum Schelmen der Stoff.<sup>1</sup>

-Ի դեպ, այս նորվույյան գործի հետ կապված: Փաստորեն, ինչպես ենթադրում էի, նրանք տանը դաշնակից ունեին, որը ոչ այլ որ էր, քան Լալ Ռաոն՝ ծառայապետը, հետևաբար Ջոնսն իրականում անհերքելիորեն պատվի է արժանի իր մեծ ցանցում գոնե մեկ ձուկ բռնելու համար:

-Բայց շահունը շատ անարդարացի բաժանվեց,- նկատեցի ես:- Դուք այս գործում ամբողջ աշխատանքը կատարեցիք, բայց արդյունքում ես ձեռք եմ բերում կին, Ջոնսը՝ փառք, իսկ ինչ մնաց Ձեզ:

-Ինձ,- ասաց Շերլոք Հոլմսը,- դեռևս մնում է կոկահնի սրվակը:- Եվ նա իր երկար, սպիտակ ձեռքը մեկնեց դեպի այդ սրվակը:

---

1 Ափսոս, որ բնությունը քեզնից միայն մեկ մարդ է ստեղծել, քանի որ քո նյութից և արժանավոր մարդ կստացվեր, և՛ սրիկա (գերմաներեն):





# Բովանդակություն

Առաջաբան..... 3

## ԱՐՆԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԸ (թարգմ.՝ Քրիստինե Չիլինգարյան)

ՄԱՍ 1. ԲԱՆԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՈՐԱԽՄԲԻ ՆԱԽԿԻՆ ՍՊԱ,  
ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴՈԿՏՈՐ ԶՈՆ Հ. ՈՒՈԹՍՈՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

Գլուխ 1. Պարոն Շերլոք Հոլմսը .....	11
Գլուխ 2. Դեղուկցիայի արվեստը.....	23
Գլուխ 3. Լորիսթոն Գարդենսի առեղծվածը.....	37
Գլուխ 4. Ինչ պատմեց Ջոն Ռենսը .....	53
Գլուխ 5. Մեր հայտարարությունն այցելու է բերում .....	62
Գլուխ 6. Թորիաս Գրեգսոնը ցույց է տալիս, թե ինչի է ունակ.....	71
Գլուխ 7. Մթության մեջ լույս է առկայծում.....	83

## ՄԱՍ 2. ՍՐԲԵՐԻ ԵՐԿԻՐԸ

Գլուխ 1. Մեծ աղի հարթավայրում .....	94
Գլուխ 2. Յուտայի ծաղիկը.....	107
Գլուխ 3. Ջոն Ֆերյեն զրուցում է մարգարեի հետ.....	116
Գլուխ 4. Փախուստ .....	123
Գլուխ 5. Վրիժառու հրեշտակները .....	135
Գլուխ 6. Բժիշկ Ջոն Ուոթսոնի հուշերի շարունակությունը.....	147
Գլուխ 7. Եզրակացություն .....	162

## ՉՈՐՄԻ ՆՇԱՆԸ (թարգմ.՝ Էլիզա Սարգսյան)

Գլուխ 1. Դեղուկցիայի արվեստը .....	171
Գլուխ 2. Գործի շարադրումը .....	182
Գլուխ 3. Լուծման փնտրտուքներում .....	189
Գլուխ 4. Ծաղատ մարդու պատմությունը .....	197
Գլուխ 5. Ողբերգությունը Փոնդիչերի դոյակում.....	211
Գլուխ 6. Շերլոք Հոլմսը ցուցադրում է իր ունակությունները .....	221
Գլուխ 7. Տակառի միջադեպը .....	233
Գլուխ 8. Բեյքեր սթրիթի անկանոն ջոկատը .....	248
Գլուխ 9. Դեղուկցիայի շղթայում օղակ է կոտրվում.....	260
Գլուխ 10. Կղզեբնակի վախճանը.....	273
Գլուխ 11. Ագրայի մեծ գանձը .....	285
Գլուխ 12. Ջոնաթան Սմոլի արտասովոր պատմությունը.....	293

ՍԸՐ ԱՐԹՈՒՐ ՔՈՆԱՆ ԴՈՅԼ  
ՇԵՐԼՈՔ ՀՈԼՄՍ

# Արճագույն գործը

---

## Չորսի նշանը

*Անգլերենից թարգմանեցին*  
*Քրիստինե Չիլինգարյանը և Էլիզա Սարգսյանը*

*Խմբագիր՝ Լուսինե Համբարյան*

*Կազմի ձևավորումը՝ Արարո Սարգսյանի,  
Լուիզա Գալստյանի*

*Նկարազարդումները՝ Լուիզա Գալստյանի*

*Համակարգչային ձևավորումը՝  
Լիանա Մինասյանի, Հեղինե Փիլոյանի*

Տպագրված է

**ԷԴԻՏ ՊՐԻՆՏ**  
Երևան, Թումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editorint.am](mailto:info@editorint.am)




**EDIT PRINT**  
12 Toumanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editorint.am](mailto:info@editorint.am)





**«Շերլոք Հոլմս»-ի  
ամբողջական հավաքածուն**



**ԷԴԻՑ ՊՐԻՆՏ**  
հրատարակչություն  
**EDIT PRINT**  
Publishing House

